# 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

## *1.1. Ազգային հաշիվներ*

### *1.1.1. Համախառն ներքին արդյունքի ցուցանիշ*

***2009թ. հունվար-օգոստոսի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշը:*** ՀՆԱ-ի արտադրության ծավալն ընթացիկ գներով, 2009թ. հունվար-օգոստոսին կազմել է 1761874.9 մլն.դրամ, իսկ իրական ծավալի ինդեքսը 2008թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 81.6%՝ 2008թ. հունվար-օգոստոսի 110.3% համապատասխան ցուցանիշի դիմաց:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2009թ. հունվար-օգոստոսին կազմել է 543688 դրամ (1539 ԱՄՆ դոլար կամ 1135 եվրո):

**ՀՆԱ՝ հաշվարկված արտադրական եղանակով**
**(ըստ ԵՀՀ 95[1] Ա 3 և Ա 6 դասակարգումների)**

*(%)*

| Հղում ՏԳՏԴ-ին | | | Իրական ծավալի ինդեքսները նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի նկատմամբ | | ՀՆԱ-ի հավելաճին նպաստման չափը (տոկոսային կետով) | | ՀՆԱ-ի կառուցվածքը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ա3 | Ա6 | | Հունվար-օգոստոս | | | | | |
| | | | 2008✧ | 2009 | 2008✧ | 2009 | 2008✧ | 2009 |
| | | Ներքին արդյունք (համախառն, շուկայական գներով) | 110.3 | 81.6 | 10.3 | -18.4 | 100.0 | 100.0 |
| | | Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ) | 123.6 | 78.5 | 2.4 | -2.5 | 11.6 | 11.3 |
| | | Ավելացված արժեք (համախառն, հիմնական գներով) | 108.8 | 82.0 | 7.9 | -15.9 | 88.4 | 88.7 |
| | | ՖՄԱԶԾ[2] | 174.2 | 96.9 | -0.9 | 0.1 | -2.6 | -3.2 |
| A+B | A+B | Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն | 107.9 | 98.5 | 1.3 | -0.2 | 14.7 | 15.6 |
| C+D+E+F | | Արդյունաբերություն, ներառյալ էներգետիկա և շինարարություն | 111.2 | 61.4 | 4.4 | -15.9 | 41.2 | 30.3 |
| | C+D+E | Արդյունաբերություն, ներառյալ էներգետիկան | 102.8 | 88.5 | 0.5 | -1.7 | 14.4 | 14.1 |
| | F | Շինարարություն | 117.2 | 46.8 | 3.9 | -14.2 | 26.8 | 16.2 |
| G-P | | Գործունեություն ծառայությունների մատուցման բնագավառում | 108.8 | 100.3 | 3.1 | 0.1 | 35.1 | 46.0 |
| | G+H+I | Առևտուր, ավտոմեքենաների, կենցաղային բտաղրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում, հյուրանոցներ և ռեստո-րաններ, տրանսպորտ և կապ | 106.7 | 97.2 | 1.2 | -0.5 | 17.7 | 21.2 |
| | J+K | Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում | 121.9 | 99.3 | 1.5 | -0.1 | 7.3 | 9.5 |
| | L-P | Այլ գործունեություն ծառայությունների մատուցման բնագավառում | 104.3 | 106.6 | 0.4 | 0.7 | 10.1 | 15.3 |

[1] Եվրոպական հաշիվների համակարգ:
[2] Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ: